# Դուք Գիտեյի՞ք

Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Կրթաշրջանը նախատեսել է հինգ տարբեր ուսումնական ծրագրի տարբերակներ նախատեսված բազմազան կարիքներ ունեցող Անգլերեն Սովորողների (ELs) և տարրական դպրոցների կրթական նախասիրություններ ունեցող ծնողների համար: EL Ծնողները կարող են ընտրել ծրագրերից որևէ մեկը: Բոլոր հինգ ուսուցման ծրագրերի տարբերակները երաշխավորում են օգտվել մի ամբողջ ուսումնական ծրագրից աջակցելով տարրական դասարանների ուսանողներին Անգլերեն լեզվի տարբեր մակարդակի իմացության:Յուրաքանչյուր ուսումնական ծրագրի տարբերակի հիմնական նպատակն է, որ ELs կատարողական չափանիշը հասնի լիարժեք Անգլերեն լեզվի իմացության:

Բոլոր աշակերտները, այդ թըվում նաև ELs ովքեր այժմ տարրական դասարաններում են, ակնկալվում է լիարժեք մասնակցել քոլեջ–նախապատրաստական (A-G)դասընթացներին: Փոխադրվելով երկրորդական դասարաններ և ավարտելով միջնակարգ դպրոցը պատրաստ լինեն քոլեջի և կարիերայի:

Առավել, յուրաքանչյուր ուսումնական տարբերակ ապահովում է, որ հատուկ կարիքներ ունեցող EL աշակերտը ունենա հավասար հնարավորություն մասնակցելու ծրագրին, համապատասխան իր Անհատական Կրթական Պլանի (IEP):

Ուսուցման ծրագրի տարբերակները թույլատրում են հավասար հնարավորություններ շնորհալի և տաղանդավոր ծրագրերի ու չեն բացառում տարբեր մակարդակի Անգլերեն սովորողներին:



Այս գրքույկը նախատեսված է նկատի առնելով ծնողների կարիքները և նկարագրում է զանազան ուսուցման ծրագրերի տարբերակները տարրական դպրոցում Անգլերեն սովորողների համար: Այս գրքույկը կարդալուց հետո, եթե դեռ հարցումներ կունենաք ծրագրի մասին, խնդրեմ խոսեք Ձեր երեխայի դպրոցի Անգլերեն սովորող ծրագրի համակարգողի կամ ադմինիստրատորի կողմից նշանակված անձի հետ: Ձեր հարմարության համար, կա մի տես ահոլովակ նկարագրելու ուսուցման ծրագրերը՝ http://mmed.lausd.net

### Ի՞նչ է Վերադասակարգումը:“Reclassification”

Անգլերեն սովորողի համար վերակարգման գործընթացը նշանակում է, ձեռք բերել բավարար Անգլերեն լեզվի իմացություն և ակադեմիորեն առաջադիմել առանց Անգլերեն լեզվի զարգացման աջակցությանը: Այս գրքույկի մեջ նշված բոլոր հինգ ուսումնական ծրագրերում, Անգլերեն սովորողներից սպասվում է բարձրացնել տարեկան մինիմում չափանիշները՝ Անգլերեն լեզվի գիտության և Անգլերեն զարգացման մեջ, որպեսզի նրանք կարողանան <u>հինգ տարում</u> վերադասակարգվեն, որպես առաջնակարգ Անգլերեն սովորող:Ուսանողները կարող են վերադասակարգվել մանկապարտեզի վերջում:

Վերադասակարգման համար, Անգլերեն սովորողը պետք է համատեղ համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին:

- Լինել համապատասխան հիմնարար դասարանի մակարդակի կատարելության, ըստ պետական գնահատման չափանշի «3–5րդ դաս.» կամ Անգլերեն Լեզվագիտության պահանջվող գնահատականի «K–2 դաս.»:
- Ստանալ «Վաղ Առաջադեմ» կամ բարձր «4 կամ 5» CELDT քննությունից, «Միջանկյալ» կամ բարձր միավոր (“3”. “4”. “5”) Լսողությունից, Խոսելուց, Ընթերցանությունից և Գրավորից: <u>և</u>
- Վաստակել 3 կամ 4 գնահատական Անգլերեն Լեզվից՝ նշված Տարրական Դասարանի Առաջադիմության թերթիկում:

Վերադասակարգման գործընթացը ավարտելու համար, վերադասակարգման ծանուցման նամակը պետք է ստորագրվի ծնողի կողմից և տեղադրվի աշակերտի ընդհանուր ռեկորդի մեջ:



Բազմալեզու և Բազմամշակութային Կրթական Վարչության Տեսլական Հաղորդագրությունը

Մեր տեսլականն է մշակել տարալեզվությունը, հաստատել մշակութային առավելությունները և արդյունավետ ուսուցման միջոցով նշել բազմազանությունը, որպեսզի յուրաքանչյուր ԼԱՄԴՇ ուսանող լինի առաջադեմ և պատրաստ կարիերայի ու ապագայի կրթությանը 21րդ դարում:


ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԻ
ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Բազմալեզու և Բազմամշակութային

Կրթության Վարչություն

333 S. Beaudry Avenue, 25th floor
Los Angeles, California 90017
(213) 241-5582


Հավելյալ Տեղեկությունների Համար:
http://mmed.lausd.net


© 2013

ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԻ
ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Բազմալեզու և Բազմամշակութային Կրթական Բաժին

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԾՆՈՂԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ



## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ Ծրագիր (TBE)*

**Ի՞նչ է:**

- Ուսումնական ծրագիր K-3 դաս. ուսանողների համար: Այստեղ, հիմնական ակադեմիական առարկաները դասավանդվում են աշակերտի մայրենի լեզվով, որի նպատակն է՝ մինչ 4րդ դասարան տարանցել Հիմնական Անգլերեն Ծրագրին:

**Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային:**

- Անգլերեն Լեզու ձեռք բերելու համար, աշակերտները ստանդարտների վրա հիմնված գիտական առարկաները սովորում են իրենց առաջնային լեզվով: Երբ ուսանողները Անգլերեն լեզվից հասնում են Վաղ-Առաջադեմ մակարդակի, անցնում են Հիմնական Անգլերեն Ծրագրին:

**Ինչո՞վ է այս ծրագիրը յուրահատուկ:**

- Օրական, ուսանողները ստանում են առնվազն 60րոպե Անգլերեն Լեզվի զարգացման ուսուցում, հատուկ ուշադրություն ընձեռելով և օգտագործելով իրենց առաջնային լեզուն Անգլերեն սովորելու համար:
- Մանկապարտեզում, ուսանողները սկսում են սովորել հիմնական գիտական առարկաները իրենց առաջնային լեզվով, իսկ Արվեստը, Երաժշտությունը և Ֆիզիկական Կրթությունը սովորեցվում է Անգլերենով:
- Երբ ուսանողները առաջադիմում են Անգլերենից, ավելանում է Անգլերենով ուսուցումը:

**Ո՞վ կարող է ընդունվել այս ծրագրում:**

- K-1 դասարանի Անգլերեն սովորող ուսանողները, որոնք սկսում են Անգլերեն սովորել(ELD 1-3): 2-3 դասարանի ուսանողները, ըստ անհատական պահանջների հիմունքների:

**Պե՞տք է Ծնողի Բացառության Իրավաթուղթը ներկայացնել:**

- Այո

## Երկլեզու Պահպանության Ուսուցման Ծրագիր *

**Ի՞նչ է:**

- Ուսումնական Ծրագիրը Անգլերեն սովորողների համար դասավանդվում է ուսանողի առաջնային լեզվով և Անգլերեն լեզվով, որը օգնում է ուսանողներին ձեռք բերել անգլերենի իմացության, շարունակելով զարգացնել իրենց հիմնական լեզուն:.

**Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային:**

- Ուսանողները սովորում են ըստ ստանդարտի ակադեմիական բովանդակությունը Անգլերենով և իրենց առաջնային լեզվով:

**Ինչո՞վ է այս ծրագիրը յուրահատուկ:**

- Անգլերեն սովորողները ձեռք են բերում լեզվի իմացություն և ակադեմիական կարողություն Անգլերենից և իրենց առաջնային լեզվից
- Ուսանողները զարգացնում են երկլեզու իմացություն:
- Օրվա առնվազն 10%-ը սահուն Անգլերեն խոսող և կամ տարբեր էթնիկական ծագում ունեցող հասակակիցների հետ:

**Ո՞վ կարող է ընդունվել այս ծրագրում:**

- Տարրական դասարանների Անգլերեն սովորող ուսանողները, ովքեր խոսում են ծրագրի լեզուն:
- Ըստ անհատական հիմունքների Անգլերեն սովորող ուսանողեները, որոնք սահուն տիրապետում են Անգլերեն լեզուն (IFEP, RFEP).

**Պե՞տք է Ծնողի Բացառության Իրավաթուղթը ներկայացնել:**

- Այո

## Երկլեզու Ներմուծման Ծրագիր

**Ի՞նչ է:**

- Ուսումնական ծրագիր Անգլերեն սովորող ուսանողների համար: Անգլերենից հմուտ ուսանողները դասավանդվում են Անգլերենով և EL առաջնային լեզվով: (“target language”)

**Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային:**

- Ուսանողները սովորում են ըստ ստանդարտի ակադեմիական բովանդակությունը՝ Անգլերենով և առաջնային լեզվով:

**Ինչո՞վ է այս ծրագիրը յուրահատուկ:**

- Անգլերեն սովորողները և Անգլերենից հմուտ ուսանողները ձեռք են բերում լեզվի իմացություն և ակադեմիական առաջադիմություն Անգլերենից և առաջնային լեզվից:
- Անգլերեն սովորողները, «ովքեր խոսում են առաջնային լեզուն» և Անգլերենից հմուտ աշակերտները միմյանց ծառայում են որպես փոխադարձ լեզվի վարժություն:
- Ուսանողները զարգացնում են երկլեզու իմացություն:

**Ո՞վ կարող է ընդունվել այս ծրագրում:**

- Տարրական դասարանների Անգլերեն սովորող ուսանողները, ովքեր խոսում են առաջնային լեզուն:.
- Անգլերենը սահուն տիրապետող ուսանողները (IFEP, RFEP, EO.)

**Պե՞տք է Ծնողի Բացառության Իրավաթուղթը ներկայացնել:**

- Այո

## ՀԻՄՆԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԾՐԱԳԻՐ

**Ի՞նչ է:**

- Ուսումնական Ծրագիրը դասավանդվում է Անգլերեն Լեզվով, սահուն Անգլերեն և բավարար Անգլերեն իմացող աշակերտների համար (ELD 4-5):

**Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային:**

- Աշակերտները սովորում են ըստ ստանդարտների ուսումնական բովանդակություն, դասարանի մակարդակի հավասար:

**Ինչո՞վ է այս ծրագիրը յուրահատուկ:**

- Ուսումնական Ծրագիրը նախատեսված է սահուն Անգլերեն իմացող ուսանողների համար:
- Անգլերենը օգտագործվում է որպես ուսուցման միակ լեզու:
- Անգլերեն սովորողները ստանում են անհրաժեշտ աջակցություն Անգլերենով, օգտագործելով հատուկ ստրատեգիա Անգլերեն սովորողների համար:
- Անգլերեն սովորողները ստանում են օրական 45–60 րոպե Անգլերեն լեզվի զարգացում, հատուկ ուշադրություն դարձնելով ակադեմիկ Անգլերեն լեզվի ուսուցմանը:

**Ո՞վ կարող է ընդունվել այս ծրագրում:**

- Տարրական դասարանների Անգլերեն սովորողները ELD 4-5, և/կամ սահուն Անգլերեն խոսող ուսանողները, ըստ լեզվի դասակարգման համեմատ(RFEP, IFEP, EO).
- Նոր Անգլերեն սովորող ուսանողները (ELD 1-3) կարող են ընդունվել, սակայն ոչ առանց Ծնողի Բացառության Իրավաթղթության:

**Պե՞տք է ընդունելության գրավոր պահանջ ներկայացնել:**

- Այո, եթե ձեր զավակը նոր է սկսում Անգլերեն սովորել (ELD 1-3).

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ(SEI)

**Ի՞նչ է:**

- Ուսումնական ծրագիրը դասավանդվում է Անգլերեն լեզվով, նոր Անգլերեն սովորող ուսանողների համար (ELD 1-3).

**Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային:**

- Ուսանողները ձեռք են բերում Անգլերեն լեզվի ունակություն ստանալով համապատասխան օգնություն, սովորելով ըստ ստանդարտների ակադեմիական բովանդակությունը, որպեսզի կարողանան հաջողության հասնեն Հիմնական Անգլերենի դասարանում:

**Ինչո՞վ է այս ծրագիրը յուրահատուկ:**

- Ուսանողները բոլոր ակադեմիական առարկաները սովորում են Անգլերեն լեզվով և միայն կարիքի դեպքում ստանում են օգնություն իրենց առաջնային լեզվով:
- Անգլերեն սովորող ուսանողներին, ուսուցիչները օգտագործում են հատուկ մեթոդներ սովորեցնելու ակադեմիական առարկաները:
- Օրական, ուսանողները ստանում են առնվազն 60րոպե Անգլերեն Լեզվի զարգացման ուսուցում,.

**Ո՞վ կարող է ընդունվել այս ծրագրում:**

- Տարրական դասարանների դեռ նոր Անգլերեն սովորող աշակերտները (ELD 1-3).

**Պե՞տք է ներկայացնել Ծնողի Բացառության Իրավաթուղթը:**

- Ոչ. SEI նշանակված ծրագիր է նոր Անգլերեն սովորող ուսանողների համար (ELD 1-3):

---

* 2013-2014 նոր ուսումնական ծրագիր:

Ձի տրվի Ծնողի Բացառության Իրավաթղթություն, մինչև դպրոցի ղեկավարությունը չորոշի, որ Ուսումնական Ծրագիրը, որն առաջարկվել է դպրոցում, օգուտ չի տա աշակերտին: Եթե ունեք հարցումներ կապված դպրոցի որոշման հետ, ուր ծնողի իրավաթուղթը մերժվել է, խնդրեմ ժամադրություն վերցրեք և խոսեք դպրոցի տնօրենի կամ կապվեք ձեր դպրոցի Տեղական Կրթական Ծառայության Կենտրոնի հետ՝ լրացուցիչ օգնության համար: Օրենքը դպրոցներից պահանջում է դասավանդել Ուսումնական Ծրագիրը, երբ 20 կամ ավելի նույն դասարանի ծնողներ պահանջում են իրենց երեխայի համար: Հավելյալ տեղեկությունների համար, խորհրդակցեք Ձեր դպրոցի անձնակազմի հետ:

Ծրջանավարտների թիվը հաղորդվում է յուրաքանչյուր ավարտական դասարանի համար: Այդ թիվը հաշվարկվում է բաժանելով շրջանավարտների քանակը ըստ անդամության: Անդամների հիմքը բխում է չորս տարի առաջից, 9րդ դասարան հաճախող ուսանողների քանակից և ճշտվում է այն ուսանողների համար որոնք փոխադրվել են կամ դուրս են եկել շրջանից 9րդ և 12րդ դասարանի ժամանակամիջոցում:

**2011-2012թ. ԼԱՄԴԾ շրջանավարտների թիվը եղել է 64%, որը 2% ավելի է եղել 2010-2011 թ.**